ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2015թ. N---- -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ՈՍԿԵՐԻՉՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի Արգիշտի փողոցի և Հաղթանակ կամրջի հատման մասից մինչև Կաշեգործների փողոց տանող ճանապարհահատվածն անվանակոչել Ոսկերիչների փողոց։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՈՍԿԵՐԻՉՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Մերիդիան Ազատ տնտեսական գոտի» և «Էյ Ջեյ Էյ Ազատ տնտեսական գոտի» փակ բաժնետիրական ընկերությունները միջնորդություններ են ներկայացրել Արգիշտի փողոցի և Հաղթանակի կամրջի հատման հատվածից սկիզբ առնող և դեպի Կաշեգործների փողոց տանող մոտ 700 մ երկարությամբ ճանապարհահատվածը Ոսկերիչների փողոց անվանակոչելու վերաբերյալ:

2014 թվականի փետրվարի 27-ին ՀՀ կառավարության հ.231 որոշմամբ, ոսկերչական Ազատ տնտեսական գոտու կազմակերպիչ է ճանաչվել «Էյ Ջեյ Էյ Ազատ տնտեսական գոտի» փակ բաժնետիրական ընկերությունը:

«Էյ Ջեյ Էյ Ազատ տնտեսական գոտի» փակ բաժնետիրական ընկերությունը նախատեսում է համակարգել ոսկեգործական, աղամանդագործական և ժամագործական ուղղվածության ձեռնարկությունների գործունեությունը:

Տարածքում ենթակառուցվածքների ստեղծման և զարգացման, նախատեսվող ծառայությունների մատուցման, ներդրումների ապահովման համար կազմակերպիչներին անհրաժեշտ է ունենալ դեպի տարածք եկող բարեկարգ և ճանաչելի փողոց: Կաշեգործների անունը կրող փողոցը, որի թիվ 70 հասցեի տակ թվագրված է Ազատ տնտեսական գոտին, Երևան քաղաքի քարտեզի վրա ընդհատվում է մինչև ընկերության տարածք հասնելը: Փաստացի Ազատ տնտեսական գոտու տարածք մեքենաները մուտք են գործում Արգիշտի փողոցի և Հաղթանակի կամրջի հատման հատվածից սկիզբ առնող մոտ 700 մ երկարությամբ անանուն ճանապարհով:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Ազատ տնտեսական գոտու տարածք եկող ճանապարհահատվածն անվանակոչել Ոսկերիչների փողոց:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն առաջարկությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՈՍԿԵՐԻՉՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ոսկերիչների փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՈՍԿԵՐԻՉՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ոսկերիչների փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ